

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԾՇՊՐՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ՆԵՐՍԵՍ ԽԿՐՏՁՅԱՆ

Քանի որ Հ. Աճառյանի «Հայերեն արժատական բառարանը» լույս է տեսել 1930-ական թվականներին, շուրջ 70 տարի առաջ, բնականաբար, այս տարիներին բարբառներին նվիրված բազմաթիվ դրքեր են լույս տեսել, ինչպես նաև Հին Արևելքի սեպագիր լեզուներից՝ աքքադերենից, փաներենից, լսեթերենից, իրանական լեզուներից բազմաթիվ նոր հրատարակումներ են եղել, որոնք չկային Աճառյանի ժամանակ, ուստի ներկայումս լեզվաբանների ձեռքի տակ հայերենի բազմաթիվ բառերի (արժատների) վերաբերյալ Հ. Աճառյանին անձամոթ տեղեկություններ են հայտնվել, որոնք ինչ-որ տեղ լրացուցիչ ավյալներով հաստատում կամ մերժում են այս կամ այն բառի մասին ՀԱԲ-ում արված տեղեկությունները:

1988 թ. մենք ձեռնամուխ եղանք Հ. Աճառյանի ՀԱԲ-ում շրջադրումներ և ճշգրտումներ կատարելու գործին: Առաջին հոդվածը հրատարակվեց «Պատմա-բանասիրական հանդեսում»՝ «Մտուղարանական զխտարկումներ» վերնագրով¹: Ներկայումս մենք շարունակում ենք ՀԱԲ-ում լրացումներ և ճշգրտումներ կատարելու աշխատանքը. սույն հոդվածով հիմնականում հրատարակում ենք 12 բառերի բուսածույնների, ծառատեսակների մասին՝ սեմական սեպագիր և իրանական լեզուներից բազմաթիվ ավյալներ, որոնք կամ հաստատում են ենթադրությունները, կամ նոր զուգահեռներ մատնանշում սեպագիր լեզուներում:

ԲԱՐԲԻԻՋԱԿ, ԲՈՐԲԸՆԱԿ, ՓՈՐՓԸՆԱԿ (Iris L.)

Հին հայերեն և միջին հայերեն բժշկարաններում հանդիպող բարբիզակ, բարբուզան, բարբուզնա, բարբիզնակ, բարբուզնը, բարբաններում բորբքանակ, պորպղնակ, փորփըսնակ բառի նշանակությունն ու ծագումը առայժմ մնում է վիճելի: ՀԱԲ-ը դնում է. «ձմեղ, լատ. blitum, ֆր. blite» և, հետևելով Դ. Ալիշանին, ենթադրում է առաջացած սրբար. garbuz կամ garbuz բառերից, որոնց սկզբնատուր, որպես թե սխալ կարգացվելով դարձել է barbitz²: Նման հիմնավորումը թվում է բռնագրոսիկ և, ծագումը ճշտելուց առաջ, հարկ է պարզել դրա նշանակությունը: Հ. Աճառյանը բերում է Ս. Մովսիսյանի հաղորդումը Բուլանըխի բարբառի պորպղնակ ծաղկի նշանակության վերաբերյալ, որն է՝ iris germanica. «Թրաշուշանի նման, մանիչակազույն և մեջտեղը դեղին գծիկներով սիրուն մի ծաղիկ, որ ձնծաղիկից հետո է երևում և, քիչ ժամանակից անց, չորանում: Նրա

¹ «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1988, № 2, էջ 137:

² Հ. Աճառյանի. Հայերեն արժատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ). հ. 1. Երևան, (հ. 1. 1971, հ. 2. 1973, հ. 3. 1977, հ. 4. 1979), էջ 420-421:

կյանքը մի քանի սր է տևում, որի սլատճառով քչերին է վիճակվում տեսնել այն: Սաուպարանում են քրդ. barf՝ ձյուն և bəza ծին, barfbəza այսինքն՝ ձյունածին»³: Մ. Ասատրյանը «Ուրմիայի (Խոյի) բարբառը» գրքում բերում է «պարսլզգնակը ծաղիք» արտահայտությունը⁴: Թվում է, ավելի հիմնավոր է բառս ենթադրել իրանական ակունքներից: փուշտու լեզվում գտնում ենք barbuzak "ГОРНЫЙ ЛУК"⁵, որ լալազար, հիրիկ, այրուս, րամրոս, գամրեզ, գանախ լուրջ շուշան, տիրամոր գոտի ծաղիկն է կարծվում, մանուշակի բույրով. արմատների սոխուկը գործածական է պարֆյուններիայի և բժշկության մեջ: Խիստ թանկարժեք, հազվագյուտ լինելու պատճառով է առաջացել հայերեն բարբառների «բորբսնակի ծաղիկ հո չե՛ս» արտահայտությունը (կամ պորսլզնակ, փորփրսնակ), որը ոչ մի կապ չունի ըստի որսի ծաղիկ հետ: Ռ. Ղաղարյանն իր գրքում նշում է բուրբուսնակ, բարբզնակ տարբերակները⁶, իսկ «Հայոց լեզվի բարբառային բառարանը» տալիս է բարբյուզակ, բարբյուզնակ, պարսլուզնակ – վայրի հիրիկ, գամբեզ բացատրությունը, նշելով նաև «բարբյուզնակի ծաղիկ ըլել» հեղնական դարձվածը⁷:

ԱՌԻՇ (Amigdalus L.)

Հ. Աճառյանը, քննելով հայ. նուշ բառի ստուգաբանության բազմաթիվ փորձերը, իրավացիորեն մերժում է գրանք. «Նոր բառգիրք հայկազյան լեզվի»⁸ հեղինակները լատ. NUX ընկույզ բառից էին ենթադրում, իսկ Լազարզը՝ սեմական որե՛ է լեզվից, որոնցից ոչ մեկն էլ հարմար չէ հնչյունական անցումների տեսանկյունից. Հմմտ. եբր. Iuz, արամ. Iūza, արաբ. Iauz նուշ⁹:

Բազմաչերտ հայերենի բառերի ծագումը պարզելու տեսանկյունից մեծ գեր ունեն սեպագիր լեզուները՝ աքքադերենը, խեթերենը և այլն, որոնց պեղումներից հանված սալիկները հարուստ բառապաշարով են ներկայանում մեզ, երբեմն միե՛նույն բառի մի քանի հոմանիշներով: Ահա աքքադերենի ճոխ բառապաշարում գտնում ենք նուշ բառը nushu գրությունը, որի hu-ն խուռիերեն ածանց է, ինչպես ունենք ananihu – անանուխ, parparhu- փարփար, դանդաղ բառերում: Նուշ բառի խուռիերենում և աքքադերենում գտնվելու մասին պրել ենք դեռևս Երկու տասնամյակ առաջ¹⁰:

³ Նուշն տեղում, էջ 420–421:

⁴ Մ. Ա ս ա տ Ր յ ա ն. Ուրմիայի (Խոյի) բարբառը. Երևան, 1962, էջ 231:

⁵ М. А с л а н о в. Афганско-русский словарь. М., 1966, с. 116.

⁶ Ռ. Ղ ա զ ա Ր յ ա ն. Բուսանունների բառարան (այսուհետև՝ ԲԲ). Երևան, 1981, էջ 16:

⁷ Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ). Հ. Ա., Երևան, 2001, էջ 168:

⁸ Նոր բառգիրք հայկազյան լեզվի. Հ. Ա. Բ., Վենետիկ, 1836–1837, էջ 781:

⁹ ՀԱԲ. հ. 3, էջ 472:

¹⁰ "Древний Восток", Ереван, 1983, № 5, с. 196-197.

Մենք Ֆոն Ջոզենի «Աքքադերեն բառարանում» գտնում ենք երկու հոմանիշներ, մեկը nushu-ն է¹¹, որը բացատրվում է՝ «ինչ-որ մի թուփ» կարելի է վստահորեն ասել, որ nushu-ն նույն է՝ խուռ. արտասանությամբ որը որպես հոմանիշ է հանդես գալիս մի քանի այլ տեքստերում sigid siged, sigit բառերին, որոնք նշանակում են նույնը։ Այս բառերը վստահորեն կարելի է ասել, որ սեմական ծագում ունեն. դրանք առկա են երբ. saged արամ. sigda, sgedta ձևով¹²։ Saged նշանակում է արթուն, բոլոր ծառերից առաջ՝ վաղ գարնանը ծաղկելու պատճառով, որպես թե այն ձմռանը մնացել է արթուն։ Ուրեմն, սեմական լեզուներում ունենք երկու հոմանիշներ sigid, և nushu. վերջինս թեև խուռիներեն հնչապատկեր ունի, սակայն տեղական մեկ այլ լեզվից կարող է լինել։ Այստեղ կարևորն այն է, որ հայ նուշ-ի ղուգահեռը դտնելով, միաժամանակ օգնում ենք (այսինքն՝ հայերենն է օգնում) ակքադերենի nushu-ն հաստատելու, որ, իրոք, այն նուշ-ի մեկ այլ հոմանիշն է և հայ. նուշ-ը սեմական ծագում ունի։

Ուրարտագետ Ն. Վ. Հարությունյանը նկատել է, որ ուրարտական մի արձանագրության մեջ ինչի աստվածությունը անվանվում է նուշ՝ DINGIR-ri-se nu-u-se, այսինքն՝ ինչի անուշ է¹³։ Ս. Ամատունին գրում է, որ Երևանում նուշ դործածվում է իբրև ածական «անուշ, քաղցր» իմաստով՝ միայն կորիզի համար¹⁴։

ՍՊ, ՈՍՊՆ (Lens Adans /Lens L)

Հ. Աճառյանը ՀԱԲ-ում արձանագրում է օտար լեզուներից հայերեն ոսպ բառին նման մի քանի բառեր, որոնց նշանակությունն այլ է. ինչպես ուռև. օժոն ծաղկախոտ, հուն. Φσῆρον Φσπριον բնուկեն, ոլուռ, և սեմականներում առկա ասոր. esrā, խոտ, արաբ. ʾasr Խոտ, լուլյա, ասր Կալար խոտ բառերը¹⁵։ 1988 թ. մենք «Աքքադերեն բուսանունների ճշգրտումը հայերեն ղուգահեռների օգնությամբ» հոդվածում բերել ենք մինչ այդ անհայտ սպ ղուգահեռ տարբերակը, աքքադ. sepu-ի համեմատությամբ¹⁶։ Ֆոն Ջոզենի «Աքքադերենի բառարանում» sepu բացատրվում է «մի հատիկաբույսի տեսակ» (ein Getreideart)¹⁷։ Անշուշտ, խոսքը ոսպի մասին է, որովհետև այն հանդիպում է նաև akal se /e/pe կապակցությամբ՝ akal - «ուտելիք, կերակուր» որոշիչով¹⁸, այսինքն՝ «ոսպի ուտելիք, կերակուր»։

Հայերենն օգնում է հաստատելու աքքադ. sep-ի ոսպ լինելը, քանի որ հայերենում ևս գտնում ենք սպնախայտ, այսինքն՝ «ոսպի պես սպուտե-

¹¹ V o n S o d e n. Akkadisches Handwörterbuch (այսուհետև՝ AHW). Wiesbaden, 1965, S. 806.

¹² V o n S o d e n. AHW, S. 1247-1248.

¹³ Корпус урартских клинообразных надписей, № 106, Ереван, 2001, с. 117.

¹⁴ Ս. Ա մ ա տ ու ն ի. Հայոց բառ ու բան. Վաղարշապատ, 1912, էջ 506:

¹⁵ ՀԱԲ. Հ. 3, էջ 568:

¹⁶ "Древний Восток", Ереван, 1988, №5, с. 198 – 199.

¹⁷ V o n S o d e n. AHW, S. 1636-1637.

¹⁸ Նույն տեղում, էջ 1636–1637:

րով»¹⁹, «ոսպի նման պուտիկներով ձի», պարզապես սպօք, «Բարսեղի հարցերը» գրքում սպօք գործիական հոլովով: Թեև ոսպի կողքին սպ ձևն անսովոր է որակվում, սակայն ո-ն հավելյալ հնչյուն է, ինչպես ունենք ջին-ոջին, սին-ոսին, հետևաբար նաև՝ սպ-ոսպ զուգահեռում:

Ինչպես բուսանուններից շատերը, այնպես էլ ոսպ-ը /սպ-ը տեղական ինչ-որ լեզուներից աքթագերենին և Հայերենին փոխանցված բառ է:

ՆՇԴԱՐԻ, ՆՇԴԱՐԵՆԻ, ԱՆՈՒՇԱԴՐ (Carpinus L.)

Նշդարի կամ նշդարենի ծառանունը ՀԱԲ-ում Հ. Աճառյանն արձանագրում է որպես «անստույգ ծառ», չնայած այն բանին, որ նշում է նաև այդ ծառի համար ենթադրված նոճի, սոսի, որթի նեցուկ նշանակությունները²⁰: Բանն այն է, որ բուսաբանական տարբեր բառարաններում տրված են այդ ծառի համար տարբեր, երբեմն միմյանց հետ կապ չունեցող բացատրություններ: Այսպես՝ Ա. Բեդլյանի մոտ գտնում ենք «նշդարի, նշդարենի, կարպենի, ծինկարի, պեխի, բոխի, պտղի» բացատրությունները, որպես լատ. *Carpinus Betulus L.* ծառատեսակի²¹: Ռ. Ղազարյանի բառարանը բացատրում է. բոխենի կամ բոխի (*Carpinus L.*) №160-ի տակ «արժի, ծինկարի, նշդարի» (որպես կեչազգի ծառ *Betulaceae*), իսկ №314-ի՝ «եղևնի-նշդարենի», այսինքն՝ որպես սոճազգի – *Pinaceae-Picea* Dieb. ուր նշդարենի, նշդարի հղված է. «տե՛ս 1. եղևնի, 2. բոխենի»²²:

Ինչպե՞ս պիտի լուծվի այս խճողումը: Լուծման բանալին տալիս է պարսկերենը, քանի որ ծագմամբ այն իրանական բառ է (պահլավերենից է): Այն կազմված է պհլ. *anos* (*anos* «անմահ»), *qbenq.* *anaosa* անմահ և *darū* դեղ եզրերից. *nusdarū* էր կոչվում այդ ծառից ստացվող խեժահյութը՝ նուշադր-ը, որը ենթադրվում էր որպես բալասան, հակաթույն, մեղր, նեկտար և բժշկության մեջ մեծ հարգանք ուներ. այս իսկ պատճառով էլ այդ բալասանը կոչվում էր *nus+darū* «անմահական դեղ», ռուս. «бессмертное зелье»: - *нашатрырь*. պրսկ. *nastar* է կոչվում եղևնին կամ «եղևնու ալյուր», որ ապրում է մինչև 500 տարի»: Խուզիստանում և Ֆարսում այն պարզապես կոչվում էր *nus* (*Thuja Orientalis*) «կյանքի ծառ», թերեւս և այստեղից է հայ. նոճի-ն: Եվ այսպես հայ. նշդարի-նշդարենի – պհլ. **anosadur*, որից ծագում է նաև հայ. անուշադր (նըշազըր, նաշազիր), պրսկ. *nūšadir*, *nasadir* ձևը: Ինչպես ճիշտ նկատել է Գևորգ Դպիրը, այս ձևը Հայերենը կարող էր վերցնել միայն ասորերենի միջնորդությամբ, քանի որ պհլ. **anosadur* չի ավանդված²³: Հ. Աճառյանը չի հասկացել, որ անուշադր-ը և նշդարը միևնույն բառերն են, դրանք չի միացրել, բացատրել է որպես առանձին, տարբեր բառեր:

¹⁹ Բժշկարան ձիոյ Երևան, 1986, էջ 59:

²⁰ ՀԱԲ. Հ. 3, էջ 461:

²¹ A. B e d e v i a n. Illustrated Polyglottic Dictionary of Plant Names (այսուհետև՝ B e d e v i a n). Cairo, 1936, էջ 147, №874:

²² ԲԲ, էջ 17, 29, 71:

²³ ՀԱԲ. Հ. 1, 209: Տե՛ս նաև բառարան Պարսկերէն... ի Գէորգեայ դպրէ Տէր Թովհաննիսեան Պալատացոյ ի Կ. Պոլիս, 1826, էջ 342:

ԴԻՌԱԴԱՐԱ ՄԱՅՐԻ, ԴԻՎԱՑ ԾԱՌ ԿԱՄ ՔԱՋԱՑ ԾԱՌ,
ՄԱՅՐԻ ՀԻՄԱԼԱՅԱՆ (C. Deodara Loud.)

Հ. Աճառյանի ՀԱԲ-ում գտնում ենք այս բառը տիվտար տառադարձությունում: Ամիրդովլաթ Ամասիացին ունի տէլտար սանավպար ի հնտի: Գտնում ենք նաև տէվտուր ձևը: Այն համարժեք է Ավիցեննայի օգտագործած Հնդիկ մայրիին («Հնդկաստանի սոճի»)՝²⁴: Բուսաբանական մասնագիտական մյուս ուսումնասիրություններում այն գործածված ենք գտնում նաև դիւադարա մայր, դիւատարա մայրի, տիւտար, քաջաց ծառ, դիվաց ծառ, մայրի հիմալայան համարժեքներով՝²⁵: Դիւդար կամ դիւադարա ծագում է իրանական լեզուներից, քանի որ բարդություն երկրորդ եզրը՝ ւարա, դար նշանակում է ծառ, որով լինում է ամբողջ բարդությունը՝ dīv + dar «դևի ծառ»: Եվ իսկապես, սրսկ. dīvdār -ին հոմանիս են նաև draxt khag: Դրախտ քաջ «քաջի ծառ», Kac satan «քաջ սատան» snubr satan «սնուբր սատան» և կամ (=Larixa Deodara Kach. Pinea Deodara Roxb.)՝²⁶: «Շաջար էլ ջին» արտահայտությունն էլ, որ նույնն է արաբական հորջորջմամբ, ուր ջին-ը համարժեք է քաջ և սատան բառերին: Ինչպես հայտնի է, հայ. քաջ բառի ստուգաբանությունն առ այսօր չի պարզված, դրա նշանակություններն են՝ «լավ, ընտիր, ազնիվ, առաքինի, պատվական, արի, կտրիճ, դյուցազն, հսկա, առավել, ավելի, մեծապես» և վերջապես՝ «ոգի, դև, փերի»:²⁷ Ըստ երևույթին հայ. քաջ-ը և սլաոնական khag-ը ծագում են մեկ ընդհանուր ակունքից:

ՔԱՋԱՑ ԾԱՌ (C. Deodara Loud)

Հայերենի բուսաբանական գրականության մեջ գործածական դիւաց ծառ, Հնդիկ մայրի քաջաց ծառ արտահայտությունը հավասարազոր է մայրի Հիմալայան, դիւադարա մայրի, տիւտար (Ավիցեննա) արտահայտություններին: Հ. Աճառյանի ՀԱԲ-ում այս անվանման բացատրությունը չկա, թեև գեղաբուսական բազմաթիվ գրքերում այն առկա է:

Մեզ թվում է, այս ծառի անվան տարածումը պիտի որոնել Հայկական բարձրավանդակից: Կովկասյան լեզուներում, ինչպես օրինակ, վրացերենում՝ քաջի «սասանա, դև, խորամանկ և խարեբա մարդ», քաջիանի՝ «դիւվահար, խենթ, խորամանկ, խարեբա», քաջուրա՝ «սասանայություն, խորամանկություն», Կասպագովկիայի հուն.՝ χατσόρα «մղձավանջ, շար ողի»՝²⁸ նաև սրսկ.՝ draxt khag «քաջի ծառ», dīvdār «դևի ծառ» ձևերով, որոնց համարժեք են արաբ. šagar el gin «ջինի ծառ», snubr satan «սատանի սնուբրի» կամ khag satan «քաջ սատան» արտահայտությունները: Հայոց հեթանո-

²⁴ ՀԱԲ. հ. 4, էջ 409: Տե՛ս նաև Ամիրդովլաթի Ամասիացույ. Անգիտաց անպէտ. Վիեննա, 1926. էջ 419, № 2434, էջ 569–570, № 3427: Հայրուսակ, № 2955:

²⁵ Յ. Արթիսեան. Աստուածաշունչի սուեկիրը. Կ. Պոլիս, 1913, էջ 151: ԲԲ, 77.

²⁶ A. B e d e v i a n. Նշվ. աշխ., № 923, էջ 166. M. Y e k t a y. Nouveau Dictionnaire classique illustre français-perse. Tehran, 1938, p. 1078. ՀԱԲ. հ. 4, էջ 554–555: ԲԲ, 26, 64, № 725բ: Персидско-русский словарь, т. 1, М., 1981, с. 697.

²⁷ ՀԱԲ. հ. 4, էջ 555:

սական ոգիների մեջ քաջքերը առանձնահատուկ ուժի տեր են սլավոններին՝ ըստ Խորենացու՝ Արտավազդին նրանք շղթայեցին Ազատն Մասիսի բարայրներում:

ԸՆԿՈՅՁ, ԸՆԿՈՅՁ (Juglans regia L.)

Հ. Աճառյանի ՀԱԲ-ում անորոշ է մնում Հայ. լնկոյղ բառի ծագումն ու կազմութունը, թեև այնտեղ բերված են բոլոր կարծիքները: Ամփոփելով, Հ. Աճառյանը եզրակացնում է. «Բառս գտնվում է Առաջավոր Ասիայի շատ լեզուների մեջ... Բայց այս ձևերից ոչ մեկը չի կարող Հայերենի մայր Համարվի: Ընդհակառակը շատերը կարող են բացատրվի Հայերենով»²⁸: Նա բերում է արաբ. gāvz, սլրսկ. goz, gāvz, թուրք. ceviz, ասոր. gāwz, եբր. og oz, օսեթ. anguzā, ānguz, վրաց. /իմերել. nigozī և այլն²⁹: Հայերենի բարրատներից մի մասն էլ ղրաե արմատական ձևը՝ Վանի բ. գոգ, Արաշ-կերտի բ. գուգ, Մոկս՝ գիւգ, Իսկ մնացյալները՝ ունդուգ, ինդուգ, անդուգ, սնդուգ, նրնդուգ և այլն³⁰:

Ահր կարծիքով բառս կարող է ծագել հնդեվրոպական լեզուներից, քանի որ այն ստուգաբանվում է իրանական *a-gauza, ափեսա. gaoz «ծածկել, թաքցնել», որ ափել է (agoz) «ծածկույթ, սլառայան»: Այսինքն՝ սլառուղն սառուցել է նման անվանում վրան կեղև, սլառայան ունենալու սլառաճառով և ընկալվել է «ծածկույթավոր, սլառայանով, թաքցրած»³¹: Այս վիսսար հիմնավորում է սառնում նաև Հայերեն մի քանի բարբառներում գյող արմատական ձևի ունեցած միջուկ նշանակությամբ: Այսպես, օրինակ, Մ. Մուրադյանի վկայությամբ՝ Շասախի բարբառում գյող են «անվանում ոչ թե լնկույղը, այլ նրա միջուկը, իսկ ընկույղին ասում են կոքյալ»³²:

Մուգիի սոցիերեն արձանագրություններում հանգիստող (օրչչ) «թաքնվել, ծածկվել» բառը Գերշևիչը ենթադրում է՝ *apa-guzya -ից³³ հմմտ. բուզդ. pčwyz (օրչwez) «թաքցնել» apa-guzaya – (հմմտ. Հայ. դյոզերով «թաքուն, ծածուկ, գաղտնի» արտահայտությունը, որ մինչև այժմ էլ կենդանի է Արարատյան (Երևան) և մի շարք այլ բարբառներում, և այն կապ չունի թուրք. goz «աչք» բառի հետ:

Այս բոլորից հետո կարելի է տալ բառիս ստուգաբանությունը. այն կազմված է ըն - մեջ, ներս նախածանցից, ինչպես որ ունենք ներգոյական կազմող ձևերում «Ըն մարմնոջ, ըն ձայնի» կամ՝ ընբերանել, ընրունել և այլն և դոյղ «ծածկված, սլառայանավոր», որով ընգոյղ ընկալվում է «սլառայանի, ծածկույթի մեջ ներկայված» նշանակությամբ:

²⁸ ՀԱԲ. հ. 2, էջ 130:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում:

³² Մ. Մ ու Ր ա դ յ ա ն. Շասախի բարբառը. Երևան, 1962, էջ 69:

³³ Gerschewitch. 1962, 85 CDMII, 122.

ՍՈՃԻ (Pinus L.)

Հայերենի սոճի «վայրի պիստակենի, սոնոպրի, փիճի, թեղոչ, չամի» (Սոճաղզիներ – Pinaceae) բառի ծագման հարցը ՀԱԲ-ում թողնված է անորոշ³⁴, թեև յամանակին Դը Լագարդի կողմից արվել է ճիշտ առաջարկ: Դը Լագարդը suc արմատից զենդերենի (ավեստայի) saocya այբուլի ձևից ենթադրեց Հայերեն սոճի (չոճի), որը, սակայն, մերժեց չ: Հյուբշմանը: Մեզ թվում է, միանգամայն ընդունելի է Դը Լագարդի ենթադրությունը: Բառս տարածված է նաև Հայերենի որոշ բարբառներում, ինչպես, Խոտորջուրում՝ շօջի, վրաց., իմերել., օսս. սոճի: Ստուգաբանությունն ընդունելի է դառնում հատկապես Հայերեն մեկ այլ բառի՝ մարխ /մախր-ի գոյությունը /եղևնաղզիներից/, որն առատ խեժի և դյուրավառության պատճառով է իր անվանումն ստացել, ինչպես կարող էր լինել սոճի-ի հետ: Ավեստայի saok «այրվել մեղմ բոցով» (ներկայի հիմքից) դարձել է saocya-soč (swc) այրել, այրվել, վառվել», k-c անցումը ցույց է տալիս, որ փոխառությունը saocya ձևից է:

ՓՇԱՏ (Elaganus L.)

Հետևելով Շրոդերին և Հ. Թաղիադյանցին, ՀԱԲ-ում Հայերեն փշատ-ի ծագման վերաբերյալ Հ. Աճառյանն այն կարծիքն է արտահայտում, որ «կազմված է փուշ բառից»³⁵: Շրոդերը գրում է. «էս պտղի անունը փշատ այ, իբր թե փշահատ», իսկ Հ.Թաղիադյանցը՝ «Հայեցեալ ի ծառն փշալից՝ ասի փշատ, այինքն փշահատ, բայց Հայեցեալ ի քաղցր ալիւրն... կոչի փշատ, այսինքն փոշահատ»³⁶: Հավանաբար, այստեղ գործ ունենք կեղծ ստուգաբանության հետ: Ավելի հավանական է թվում մեկ դրա ծագումը իրանական լեզուներից. ավեստայում pisanl «ծեծած, սղկած, մանրած», հին հնդ. pinasti «ծեծել, սղկել», իրան. *pista pist, որով ծառն իր անունն ստացած պիտի լինի ալրանման ծեծված պտուղների պատճառով: Փշատ բառի առկայությունը թուրքմենների մոտ նշում է նաև Գ. Պ. Վասիլևան իր «Մանկական զարդերի մոգական ֆունկցիան թուրքմենների մոտ» հոդվածում³⁷: Նա փշատի լատիներեն համարժեքը համարում է *Elaeagnus angustifolia* L. և տալիս է նաև loxa-uzge³⁸. պետք է եզրակացնել, որ փշատ բառը Առաջավոր Ասիայում առածված անվանում է եզել, քանի որ Խորեզմի ուղբերկները նույնպես գիտեին փշատը:

³⁴ ՀԱԲ. հ. 4, էջ 241:

³⁵ ՀԱԲ. հ. 4, էջ 508:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Г. В а с и л ь е в а. Магические функции детских украшений у туркмен. — В кн.: "Древние обряды верования и культы народов Средней Азии", М., 1986, с. 192.

³⁸ Նույն տեղում:

ՓԻՃԻ (Pinus sativa, Pinus L.)

Հայերեն փիճի «մայրու տեսակ, սնովպար», Pinus sativa Հաճն փիճի, Խաճ. փիջի, Սվեդ. փիճա, որից խեթափիճի, գետնի փիճի, փիճոչ պտուղ և այլն, թեև ՀԱՐ-ում ենթադրվում է վրաց. *pitvi* «մի տեսակ մայրի, СОСНА» բառից, լազ. և մինգրել.՝ *Pinčo*³⁹: Սակայն մեկ այլ ղուգաՀեռի առկայությունը փուշտու լեզվում՝ *Pevuč* ձևով⁴⁰, փոխում է վիճակը և թույլ է տալիս ենթադրել թերես Հնդեվրոսպական ակունքից, մանավանդ որ մեկ այլ ծառատեսակի անվանում, ինչպիսին է սոճի-ն, ինչպես տեսանք, նույնպես իրանական ծագում է ենթադրում *sačya* այրվող նշանակությամբ, որը նույնպես վերջավորվում է *čya*-ով, որ Հայերենում դառնում է -ճի (Համտ. նոճի, սոճի, փիճի):

Հայերեն փիճի-փուշտ *pevuč* ղուգաՀեռից բացի V-ի Հավելում նկատվում է նաև փուշտու-Հայ. այլ ղուգաՀեռներում ևս, ինչպես օրինակ՝ Հայ. ուբու, փուշտու *arva* «ոգի, Հոգին»:

ՏԱՆԶ (Pyzus L.)

Հայերեն աանձ բառի ծագումն առ այսօր մնում է անհայտ⁴¹: Մասնագիտական գրականության մեջ այն կարծիքն է Հայտնվում, որ որոշ տեսակի տանձերի Հայրենիքը եղել է Անդրկովկասը⁴²: Ոմանք էլ ենթադրում են, որ Հենց սանձ անվանումն էլ տարածվել է Հայերենից. մասնավորապես Ի. Մ. Ստեպլին-Կամենսկու կարծիքով պամիրյան լեզուներում, պրսկ. *amrud* կամ պհլ. *urmod* «Հայկական ծագմամբ է և աանձի այգ աեսակը Անդրկովկասից է ծագում»⁴³: Այստեղ Հեղինակը թույլ է տալիս մի վրիպում, որը, անշուշտ, արդյունք է ինչ-որ թյուրիմացության: *Armut*, *almutut*-ը թուրքերեն լեզուներում տարածված բառ է և Հին ժամանակներում անցել է իրանական խմբի լեզուներին, այդ թվում նաև թաջ., *hamrauta*-ն Մորգենաստիերենն վերականգնում է Հին իրանականի Համար: Հայ. տանձ անվանումը կապվում է Հնդարիականների Հետ, որոնցում զանում ենք Հեռույալ ղուգաՀեռները. աֆղան. *tangu* «վայրի տանձ», *tanga* «այգու տանձ», Հին Հնգկ. *tanka*, փանջարի *tangi* «վայրի տանձ», գամելի, *tangu* «չինա», *tāngū*, որոնք մյուս Հնդարիականների Հետ կատի, վայգալի *ton* բխեցվում են **tongō*-ից, որի աղբյուրը կարող էր լինել կիտվարի (զարգերենի) *tong* տանձ բառը⁴⁴:

³⁹ ՀԱՐ. Հ. 4, էջ 503-504:

⁴⁰ М. А с л а н о в. Ызл. աշխ., էջ 207.

⁴¹ ՀԱՐ. Հ. 4, 1979, էջ 369:

⁴² П. И. В а в и л о в, А. Д. Б у к и н и ч. Земледельческий Афганистан. Л., 1929, с. 460, примеч. №1.

⁴³ И. М. С т е б л и н - К а м е н с к и й. Очерки по истории лексики памирских языков. М., 1982, с. 108-109.

⁴⁴ С. D o e r f e r. Türkische Lehnwörter im Tadschikischen. Abhandlungen für Kunde des Morgenlandes. 37.3. Wiesbaden, 1967; R. L. T u r n e r. A Comparative Dictionary of the Indo-Aryan Languages. London, 1966 (vol. 2, 1973, I-III, p. 220, № 5429).

ФИЛОЛОГИЧЕСКИЕ УТОЧНЕНИЯ И ДОПОЛНЕНИЯ

NERSES MKRTCHIAN

Р е з ю м е

В статье приведены названия 12 растений и деревьев из "Корневого-этимологического словаря армянского языка" Р. Ачаряна, происхождение которых либо оставлено открытым, либо представлено неполно. Новые данные взяты из клинописных текстов аккадского языка, из диалектов армянского или иранских языков.

PHILOLOGICAL CORRECTIONS AND ADDITIONS

NERSES MKRTCHIAN

S u m m a r y

In the offered article is discussed the origin of twelve plant and tree names, given in "Armenian Fundamental Dictionary" by prof. H. Acharyan. Basing on Akkadian language and also using some Persian and Armenian new-found sources, the author makes some additions and corrections around these names.